

Музыка
Григорьев Г. И.

891. 99
7-16

1925



ՊԱՆԱՐԵ

7-8 NOV 2011

ԳՅՈՒՂԵՐԻ

ԿԱՆԿ

391.99

7-16

ՊԱՆԱՐԵ:
1925



891.99

7-16

պ

ՊԱՅԱՐԵ

ԳՅՈՒԽՆԵՐԻ ԿԱՆՉԸ

58450




ԹԻՖԼԻՍ - 1925

17.07.2013

7933

ფურცელი

ფურცელი
18 0 2 5



სიმონიძე

Главлит № 140 Тифлис Тираж 600

ძ.ს.ჭ.ლ. ჟიურის რაზნი 4-რე თყ., შილკ. ქიოკ. № 3.

1501-041998





Պ Ա Յ Ա Ր Ե

Պահարե —
 մի զիլ բառ՝ ուրախ սրտից
 ու ցավեր ցրող գործիք.
 Պահարե — բրբռիչ դրդիչ,
 մի ցատկող փայտե խրցիկ:
 Պահարե — խինդի ալիք,
 բոլորին ծիծաղ ծախող
 ու մանկան չալ խաղալիք,
 կամ գնած մի ճուղի խաղող:
 Պահարե — մի դեր-ասան,
 ուրիշի սիրտը կրկնող,
 մի որ ժան, մի որ Հասան,
 մի փալաս կրնկակոխ:
 Պահարե — ազատ թռչուն,
 իր սրտում վոչ մի հոգոց.
 Պահարե — սիրված հնչուն
 ու հանգես կանչող մի կոչ...
 Ո՛, վոչ, վոչ. —
 լսեցեք, ինձ լսեցեք.
 իմ հոգում վորպես գինի
 թշուրմ ե մի լուսածեգ, —
 հարբած եմ հրով հիմի:
 Ձեմ յես մի ճահիճ տղմուտ,

չեմ յես ցոփ մի խեղկատակ, —
 իմ հոգին անհայտ ու մութ,
 իմ հոգին ձեզ նահատակ...
 Ու խեղդած միլիոն շառաչ,
 իմ հոգում խոհեր հրկեզ,
 վորպես հոլ, յես ձեր առաջ
 ցատկել եմ, իջել կրկես,
 պտտվել ճկուն ու հեշտ,
 պտտվել մի խուլ ճիչով,
 շահելով ծափ ու գովեստ՝
 ընկել եմ խեղդող մի ծով:
 Ու հիմա
 լքում եմ «ղիրքերս ամուր»,
 հոյակապ մի շենք ողի,
 դեն ձգած «թագ ու սամուր»,
 կապում եմ հրե գտախ:
 Մենավոր, անոգնական՝
 կանչում ե գյուղն իմ հեռվի.
 դեռ այնտեղ կարիք, կական, —
 այս «բարիքն» ինձ չի ներվի:
 Փռված են իմ դեմ հանդեր,
 ծով ծարավ մի անհագուրդ,
 ու ինչքան արտեր անտեր,
 ընչազուրկ խեղճ ժողովուրդ.
 դեռ այնտեղ վախի խուճապ,
 կործանման անշեջ հնար, —
 թող կորչեն ծիծաղ ու ծափ,
 վողջուն քեզ իմ հին քնար:

Պահարե —

Թող հնչի ուժղին հիմի
 ու պայթի վորպես ական.
 Պահարեն թող կոչ լինի
 ու քայլերգ մի գեղջկական:
 Պահարեն — թուր ե հիմա,
 ճարակող մի հուր համառ.
 Պահարեն — շրջող մի ման՝
 զոռքեքի կյանքի համար:
 Պահարեն — հասած բողոք,
 ջերմացած գյուղի ծոցով,
 ու բոցով մի անողոք
 կուլակի սիրտը խոցող:
 Թող գնգն վորպես շեփոր
 Պահարեն — գիլ ու տոկուն,
 մեր կյանքից յելած բեկոր,
 «Գյուղերի կանչը» հոգում. —
 Պահարե...

ՀՐԱԺԵՑՑ ՀԻՆ ՅԵՐԳԵՐԻՍ

Մնաք բարով վախ ու արկած
 և փերիներ ծովում պարկած,
 հեռուն ապրող դեր անհաղթ,
 յեղեմական լույս ու դրբախտ.
 հողի, վոգի դուք լուսացայտ,
 սուրբ անմեռներ և Ուժ Անհայտ,
 գուր անըջանք, վերի տենչանք,
 սին աշխարհին հասնելու ջանք.
 խուցի խորքի խուլ հեկեկոց,
 որոր, ցնորք, հույսեր անվերջ,
 յերազ, միրած՝ փարթամ ու պերճ:
 Մնաք բարով հուշերի շարք,
 սուտ առասպել, զարգանդ ու չարք.—
 կյանքն է իմ դեմ ժիր, կենդանի,
 ծարավ դաշտերն իմ վաթանի...

Ի Մ Յ Ե Ր Գ Ը

Յես չեմ յերգում վոչ սուգ ու կոծ,
 վոչ ել մուրճի ուժգին զարկոց.
 բանվորի բյուր ու կուռ շարքեր,
 շշակի կանչ չեմ յերգում դեռ:

Անծանոթ է դեռ իմ գյուղին
 շախտաների անձուկ ուղին,
 գործարանի ձայնը շաչուն
 դեռ չի կանչել մեր գյուղացուն:

Իմ յերկրում դեռ ծարավ հանգեր,
 անտեր դաշտեր ինչքան կան դեռ
 ու չը հերկված ինչքան արտ, հող, —
 յես յերգում եմ գյուղը զարթնող:

ԱՌԱՋԻՆ ՊՈՅԵՏՆ ԵՄ ԳՅՈՒՂԻ

Առաջին պոյետն եմ գյուղի,
 վոր թողած սոնետս ու զագել,
 բռնել եմ մի տատամկ ուղի՝
 ուզում եմ գյուղի գովքն ասել:
 Իջնում եմ մի աշխարհ վտիտ,
 ասպարեզ մի անգույն, անկամ,
 տանմ շիկնած զարթոնքի խտիտ
 ու կյանքի հրակամ պատգամ:
 Գյուղի ցավն յերգել եմ սոսաջ,
 յերբ կուլակն հաղթող եր, արթուն,
 յերբ զսպած մի այրող հառաջ՝
 տնքում եր միլիոն մարդ անտուն:
 Յեվ այսոր պայթի թող կրկին
 գրիչն իմ բատրակի հոգում,
 հնչի կանչս աննահանջ, ուժգին,
 ու զարթնի սիլիոն միտք խոկուն:
 Յեհնում եմ ահա յես պայծառ
 պարզելու մի հրկեզ ուղի,
 յես՝ յեկած անցյալից անցյալ՝
 առաջին պոյետն եմ գյուղի:

Ա Ն Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Աշխարհն այսոր շառաչում է այնպես թափով,
 վոր չի յեղել հազար անգամ հազար տարի.
 այսոր հուժկու հրկիզվում է մի մեծ թափոր,
 վոր նոր կյանքով քաղաք ու գյուղ նա զարդարի:
 Ու յետևից արև-կյանքի մի անկատար
 վազում ենք մենք՝ ճեղքված ու մեղկ, վորպես մի սայլ,
 ու թափն այնպես ուժգին է, սուր, սրտապատառ,
 վոր ուշացած յես ենք մնում մենք հազար քայլ:
 Թույլ ենք թեպետ ու մեր կռիվն անհավասար,
 բայց կը ճեղքենք աշխատանքի հզոր ճակատ,
 վտոքի հանենք մտքի հանքեր հազար-հազար,
 աշխարհում վորբ կը բորբոքենք բորբ ճառագայթ:
 Խանդոտ ցավից զալարվում ենք և գաղազում,
 յերկրում մեր մուլթ վառում վազքի մի նոր կռիվ,
 վողջ սրտերում հրդեհում ենք լափող ցասում,
 ու վազում ենք, ու վազում ենք խռիվ-խռիվ:
 Բացված է բոց, փոթորկաշունչ մի ասպարեզ,
 փոփոխվում են, փախչում են շտապ որերը հուռթ.
 ու վաղվանը յեթե հասնես, յեթե փարես,
 կը ստեղծի վաղն ուրիշ մի վաղ բազմախորհուրդ:
 Հրդեհներում ու հողմերում այս խուլական

ինչ ել յերգես, ինչ ել կերտես՝ կանցնի շուտով,
 վոչ մի վայրկյան չես գուշակի լույս ապագան,
 հոգուդ մութը պետք է ծածկես վոսկի սուտով:
 Գիտեմ, վոր իմ յերգն այսորվա վաղվա համար
 ուշացած է, վորպես սայլը հին որերի,
 ընթացքն որվա շատ է ուժգին ու շատ համաս,—
 վաղն իմ յերգը թող տեղ հասնի մի քիչ թերի:

Կ Ա Մ Ո Ւ Ր Զ

Դարերը, —
 դարերը հին, համր ու հոգնած,
 յեկել են թառել գյուղին
 ու դառել բեռ մի դեղին.
 Թաղել են դարերն անդնդում
 անխնդում թաղեր մութ,
 խուղեր խարխուլ,
 փռել են փուշ ու փոշի
 լեռների կանաչ դոշին:
 Ու մշուշները,
 հուշերը պաղ,
 միապաղաղ
 իջել են գյուղի վրա
 ու նրան փաթաթել
 լաթ ու կեղտով:
 Յերկիրը տեսել է սոսկ
 սուգ ու սոսկում,
 սով,
 սրատում,
 սպա
 հուլունք,
 քլունգ.
 տեսել է. —
 սել ու սնի,

իսկ մշուշից դեն
 հանդեր,
 հանդեր,
 հանդեր
 և մի Հիսուս դարկադեմ:
 Ու վատը,
 հավատը կաողույս
 կապել է,
 կապկապել է
 արա-ափ,
 տապ ու թափ.
 գյուղը դառած լափ
 ավարի,
 խավարի,
 ապրել է՝
 սարսափ ու շորշոփ.
 փողոցները փոշոտ ու ծուռ,
 տնակներն անդուռ,
 սրտերը հոշոտված՝
 աղոտել են,
 աղոթել են կամաց,
 կարկամած,
 մինչև յեկել է մահը վաղահաս:
 Ու ինչքան գերեզման
 այսոր ել հուզում են,
 ուզում են՝ լաց...
 Ու գերեզման են կարծես
 գյուղերը ժիսասեր,

հյուղերը հողե,
 գեանափոր,
 վոր
 ժայռերի հետ,
 այրերի հետ
 կազմում են—
 հսկա մի գերեզմանոց:
 Այսոր ել,
 այսոր ել
 փորել են ելի
 փոսեր,
 ակոսել են հազար տեղ,
 ու կազմում են ամեն օր
 մեռելաթաղ մը նոր.
 ու դեռ շատ,
 շատ ջանել ու ծեր
 հագնում են լաթ,
 շնչում են
 ծուխ ու փոշի,
 դեռ հնչում են
 զանգ ու ժամ.
 այսոր ել
 անցնում են զուր
 ջուր ու գետ
 անհետ.—
 մինչ հեռուն
 սով է նյութի,
 ծով է բանակն աշխատանքի,

հուր ե, մուր ե ու կյանք:

Մարերը մեր ճերմակ,

սարերը մերկ,

լերկ,

սարերն անբերք

և

դյուղերը,

դյուղերը զրկված,

դյուղերը զարկված՝

կանչում են —

հեյ ..

— Թող հասնի ձայնը մեր

նոր քաղաքին,

շեփորամարտ շենքերին կարմիր,

ծխաններին,

ծխնելույզներին,

գուգոկներին կենսականչ...

Ու թող գան,

գան,

գան,

այնքան, այնքան

յերկաթ ու պողպատ,

ակներ շոգեշարժ,

տրակտորներ,

բոցեր թեժ,

վոր շարժեն,

շարժեն կյանքը ժիր...

Թող գան

հսկա մի մուրճ,

գան,

տա

մի հուր հարված

գանգերին,

գանգերին տարված.

Թող գան,

գան


հսկա մի մուրճ՝

կուրու,

կուրու կուրու—

կամուրջ...

38456



ՄԱՆԳԱՂ ՈՒ ՄՈՒՐՃ

Հեյ, յեղբայրներ մեզնից զատված,
 հարթ ու անհաղթ ձեր լույս ուղին.
 մեր հույսը դեռ մի ձեր աստված,
 մութն է փարում փոշտ գյուղին:
 Փոված է լայն քաղաքը մեծ
 ձեր թափանցող թափի առաջ,
 նստել է խոր ձեր հոգու մեջ
 ալեկոծվող մի հուր շառաչ.
 ձեռք եք բերել մրրիկ ու բաղդ,
 կիզող հույզեր ելեքարական,
 հնչում եք զիլ քայլերգ մի հաղթ
 ու վառված է ձեր ապագան:
 Ասում են մեզ, վոր կա ձեզ մոտ
 մի ծով աշխարհ՝ ձեփված հրրով,
 մի լուսե կյանք մեզ անծանոթ
 բորբոքվում է մեզնից խրոով...
 Ու անապրել ապրում ենք դեռ
 մենք մշտական կոծ ու հավար,
 ու կարկառուն միլիոն ձեռքեր
 քարշ են տալիս մի կյանք խավար:
 Մեր յերկիրը մեզմ ու անհողմ,
 սահմանը մի լեռնակատար,
 հորիզոնից փոված այն կողմ
 շքեղ յերազ մի անկատար:

Չեզ մոտ հանդես՝ կռած նյութից,
 ձեր զիրքերում հրե գանձեր,
 մեզ մոտ խաղաղ մի քուն գյուլթիչ
 և անմշակ դաշտեր անծեր:
 Թեժ բոցերից հնոցների
 ձեր հողիններն այրված ու խանձ,
 մենք դեռ մրսած, անկիզելի,
 այրում է մեզ մի խենթ նախանձ:
 Հեյ, յեղբայրներ՝ մեզնից զատված,
 յելեք ձգենք մի կուռ կամուրջ,
 միացնելու յերկու հատված,—
 բատրակ, բանվոր, մանգաղ ու մուրճ:

ՔԱՂԱՔԸ ՄԵՃԶԱՆԱԿԱՆ

Նա մի խորշակ, մի մահաշունչ ուրագան,
հազարերախ չար բորենի արնախում,
բյուրալեզու, բյուրոկրատիկ, բուրազար,
ու կրքերի գրգիռով եր բաբախում —
քաղաքը մեղչանական:

Աներևույթ ուտող հիդրա, մի գազան,
ուր կային կուռ, ապառաժված սև բարքեր,
լավեր լկող, արյունապարտ, լրբազան,
ու մունջերի մրմունջով եր նա հարբել —
քաղաքը մեղչանական:

Ու շարաված շփոթներում հազար մարդ,
բյուր հաղթվածներ թքում են դեռ կարմրագույն,
հոսանքներում կա մի գաղտնի գոտեմարտ,
դեռ բյուրերին տալիս է նա ժահր ու թույն —
քաղաքը մեղչանական:

Բորբոքել եր համաճարակ հարածուն
այն սրտերում, վոր բաղդ էյին դեգերում.
հողմի թափով հյուսից նետված գյուղացուն
տվել եր նա անբուժ մի ժանդ թոքերում —
քաղաքը մեղչանական:

Գորովագուլթ գյուղը մի մայր գրկաբաց,
հազար-հազար ախտից ազատ, պարզասիրտ.
ու մինչ այսօր շղթաներում կապկապած՝
գյուղն եր պահել ճգմիչի տակ մի գաղիբ —
քաղաքը մեղչանական:

Հեյ, մոտիկներ ու մարտիկներ իմ ցրիվ,
լքված ու խեղճ անգույն քույրեր դուք գեղջուկ,
յելք մղենք աշխարհացունց մի կոխիվ,
յերկրից ջնջենք՝ վոսկեղավան ու հեղձուկ —
քաղաքը մեղչանական:

ԳՅՈՒՂ ՅԵՎ ԲԱՂԱԲ

Գյուղն անարատ ու հում խմոր մի անձև,
 ուր բյուր արոտ, շեներ կարոտ, բնավեր,
 ուր կան թեպետ դեռ խակ ու փակ շատ անձեր,
 վոր անատամ վորոճում են չար դավեր,
 ուր մնում են կուլակ ու ռես մինչ հիմա՝
 անգոր կախված հին որերի փեշերից,
 բայց թաղեթաղ մանգաղում է սև մի մահ,
 քարհանում է բոստանը բիրտ փշերից:
 Կա գյուղերում վառվող վոզի ու սիրտ սերտ,
 վորոնք գարնան դարթնող գետ են մի վարար,
 հանդեր պարարտ, արտեր, բերրի հողաշերտ
 ու նոր կյանքի, աշխատանքի աղդարար:
 Քաղաքը հին՝ խարդախ ու գարշ քամեկուն,
 տանջվող դասի տաք քրտինքով հագեցած,
 ապրում է նա դեռ միլիոն կյանք քամելով,—
 քաղաքը մի ծածկված գազան՝ նենգ ու ցած:
 Ու չի գնա քաղաքը դեռ նոր ճամբով,
 մինչև չը գա հուժկու ալիքն իններորդ,
 մի խենթ հրդեհ՝ անդիմադիր հորձանքով,
 անհանգչելի մի ծով հեղեղ հրահորդ:
 Քաղաքը դեռ մեղչանական, մեղապարտ,
 ուր նեխվում են վոզ մի մութով նյութեղեն,

ամենուրեք վայելչություն մի հանդարտ
 ու խորշերում սիրող սրտի սուտ հեղեղ:
 Գյուղում հատակ սրտեր, արտեր լայնարձակ,
 խոր-խոր ձորեր և գոռ ջրեր հորդառատ.
 ու կը դառնա նորոգ կյանքի լուսարձակ
 գյուղը— մի հում, անձև խմոր անարատ:

Դ Ե Պ Ի Գ Յ Ո Ւ Ղ

Թողենք շքեղ մայթ ու փողոց,
ցոփ անկյուններ, կրքի գողոց,
յելեք, յելեք շարժվենք, յերթանք
գեպի գյուղի նոր աշխատանք:

Դեպի յերկիր մի քարքարոտ,
խոպան հանդեր՝ ձեռքի կարոտ
յերթանք գեպի գյուղն անճարակ՝
նետենք հրո համաճարակ:

Գցենք ահոս, հազար ածու,
որը բացենք խեղճ գյուղացու,
վարը վարենք արակտորով մեր,
վաղը վառենք միլիոն կողմեր:

Ամեն շնչող՝ թե՛ ծեր, թե՛ կին՝
թե՛ մարդ, թե՛ յեզ՝ հաշտ ու մեկին՝
արոտներում, կրճքին լեռան
աշխատանքով շահեն, յեռան:

Զնգուն վոսկու, արծաթի տեղ
կալում դիզենք ցորենի թեղ,
թնդան դաշտերն յեռ ու գեռով,
լցվեն հորերն հացի բեռով:

Թողենք շքեղ մայթ ու փողոց,
ցոփ անկյուններ, կրքի գողոց,
փառք ու վոսկի կորչին, կորչին,
յերթանք լծվենք գեղջկի գործին:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Խոհ ու
 թևեր,
 հողու
 դևեր,
 յեռուն
 աղմուկ,
 դեռուն
 և մուկ,
 չարեր,
 չար գող,
 լարեր
 զարկող.
 դարդ ու
 թախանձ,
 մարդու
 նախանձ,
 խոսք ու
 տանջանք,
 վոսկու
 տենջանք,
 հարուստ

հորեր,
 անկուշտ
 փորեր՝
 հազար
 տարով
 մնաք
 բարով:

Դուք միշտ
 գերող
 ու վիշտ
 բերող
 խնճույք
 թե քեֆ,
 հաճույք
 թե թև,
 թե խուլ
 կասկած,
 տըխուր
 արկած,
 աղջիկ
 ու հարս,
 չղջիկ
 թուխ-վարս,
 տաք գիրկ
 ու սեր
 և գիրգ
 ուսեր,

կին ու
 լսած-ակ,
 գինու
 բաժակ, —
 մնաք
 բարով,
 մնաք
 բարով:

Մնում
 են ինձ
 բնում
 իրենց՝
 առանց
 վարտիկ
 մերկ-անձ
 մարդիկ.
 ճամբան
 անձիւր,
 անբան,
 ցան-ցիւր
 հազար
 կով, եշ,
 հազար
 դոմեշ...
 Հանդեր
 անձեր,
 անտեր

դանձեր
 ու բյուր
 փեթակ,
 աղբյուր,
 գետակ՝
 հնչուն
 ու ջինջ՝
 կանչում
 են ինձ:

Հէյ, իմ
 սեպեր
 և հին
 դեպեր,
 առեր
 արտի,
 ծառեր
 բարդի.
 բան-թող,
 այրի
 հանգ, հող
 վայրի.
 առած
 թախիձ,
 սառած
 վախից,
 յերկյուղ,
 ցավեր,

մեր գլուղ
 ալեր.
 շարքեր
 դեզի,
 զարդեր
 սեզի՝
 վողջնւյն
 ձեզի,
 վողջնւյն
 ձեզի...

Վ Ո Ղ Ջ Ո Ւ Յ Ն

Մով լեռների փեշին թառած
 արտաներին հեռատարած,
 արտին, հանդին դեռ չը հերկած,
 հորիզոնին կարմիր ներկած,
 մեզին, ձեզին ծիրանագույն
 բերել եմ յես վողջնւյն, վողջնւյն:

Շշմած ու շիւ շողին, շաղին,
 թիթեռների խայտուն խաղին,
 արտուանների արտում տաղին,
 հանդի հոտին ու հոտաղին,
 ծփուն ծովին յերկնի հանգույն
 ու զիլ զովին հրկեզ վողջույն:

Կակաչներին, կանաչներին,
 իմ հին ճանաչ՝ ճանաչներին,
 ծաղիկների բույրին անանց,
 շեկ փոշու մեջ թաղված կանանց,
 կովկիթների ձայնին շաշուն,
 փրփուր կաթին քրքիջ վողջույն:

Գյուղի կանչին ու հավարին,
 թերի թողած զարնան վարին,

միլիոնների ծով ծարավին,
անտիրական, մերկ պառավին,
բատրակներին իմ մոխրագույն,—
անհարկներին զրկից վողջույն:

Ավաններին նեղ ու քարոտ,
խոզաններին ձեռքի կարոտ,
հյուժվածներին ուժից ընկած
ու ծերերին քաղցից սմբած.
աշխարհի մեջ հավերժ անբույն
զրկվածներին փրկիչ վողջույն:

Հողիներին բոլոր արթուն,
քրտնաթաթախ հողի մարդուն,
ըմբոստներին ժիր ու տոկուն,
խոր թմիրից զարթնող վագուն,
զորձին արգար և հարածուն,
աշխատանքին կիզիչ վողջույն:

Գ Յ Ո Ւ Ղ

Մշուշի մեջ սուզված հավերժ
նիրհող իմ գյուղ դու վհատված,
պոյեաներից միշտ տարամերժ,
զրկվածների անհույս հատված.
գյուղ, յերկունքում իրիկնային
մեղք ես քավում դու հինավուրց,
առաքելով յերկնի գահին
դեռ բողոքի թախծուն մի խուրձ...
Քո դատը միշտ պարտված, թերի,—
ձեռք ես բերել սուրբ իրավունք՝
որհնել փոշին աստվածների,
զրկել անգոյ մի պաշտամունք:
Դեռ քո մորմոքն անսպեղանի
ու անձանոթ՝ գյուղ իմ հոշոտ,
մի ձևական հարց սեղանի,
դարակներում ընկած փոշոտ:
Իմ շիկահեր գյուղ հեռակա,
կապուտաչյա նախշուն իմ կույս,
գյուղ՝ անարբունք, անսպազա,
ճամբամիջում դու տարակույս,—
փակված մթին քո անձավում՝
չես ապրում կյանքն այս հրակեզ,
հողմերը բորբ վողբ են թվում,
որերը հուր սարսում են քեզ.

զնւ, ընկեցիկ մի խորթ զավակ,
 պընդ, իմ խղճուկ, անտիրական,
 դեռ բեգլառի հլու զավակ
 ու չը լուծված քո ապագան. —
 յես՝ մոռացված մի խեղճ պոյետ՝
 յերզը հյուսող բատրակների,
 միշտ անբաժան կը գամ քո հետ,
 ու թող քաղաքն ինձ չը ների:

Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ը Ծ Ե Ր

Հորանջում են գյուղերը ծեր՝ ծուլլ ու զանգաղ,
 խուղերը խուլ՝ նեխված ու գարշ մի զի անթաղ,
 մշուշի պես տարածվում ե խորհուրդ մի սուս
 ու անե-տուն այց ե անում մի հին Հիսուս. —
 Իջնում են ծունկ հազար Ղազար, սմբած Սրբո
 ու թառամած բյուր Անթառամ խաչի ներքո,
 բանի-քանի լծկան ու կով, կթի մատակ
 մորթվում են դեռ անգիտակից, վորպես մատաղ:

Այնքան աշխույժ ծփծփանքի, սրտերի մեջ
 հոգնած ու խեղճ ավանն անուժ լեշ ե մի մեծ,
 սուղված հավերժ ազոթքներում ծխում ե նա,
 վոր հողի տակ գեթ հանդերձյալ կյանք ունենա:
 Գիշերը գորշ յերթիկներից սողում ե ցած,
 կուշ են գալիս մեր ու մանուկ վողջ վախեցած,
 փաթաթվում ե գյուղի վզին մի ցավ մթին,
 բոլորն ահով շարվում են գոլ թոնրի շրթին:

Գոմում խարխուլ ծուռ վոսներով չարքերը լի,
 դետեղերքում վխտող վոհմակ չար գայլերի,
 մի հոգեառ շրջում ե բուրթ մարակ ձեռին,
 հարվածելով անգուրթ մի զարկ մեռնողներին,
 վոռնում ե շունն անծայր մի կոծ դեզի կողքին,
 ձայն են տալիս այրերը խոր այս խոլ վողբին,

ու գունաթափ մի շեկ լուսին ժպտում է լուս,
խաղաղ ու պաղ փուփում է լայն քունն ամենուր:

Թույլ ու հոգնած ննջում են գեռ գյուղերը մերկ,
ու գրկել է վողջ հորիզոնն հրե մի ներկ.
արևելքում բացվում է բոց մի ճաճանչուն,
մարդկանց նորից առավոտվա զանգն է կանչում...
Մինչ անհանգիստ մի հուր ընկած հեռուներում,
մի փոթորիկու ու լուսատենչ կյանք է յեռում,
վորպես անտեր, նեխված ու գարշ մի դի անթաղ՝
հորանջում են գյուղերը ծեր՝ ծույլ ու դանդաղ:

Մ Ա Ր Տ Ա Կ Ո Չ

Հեյ, լսեցեք, հեյ, լսեցեք, —
բորբոքված է նոր լուսածեզ,
հուրն է գրկել վողջ աշխարհին,
մեռնում են լուս շարքերը հին...

Յեվ գեռ ձեր գյուղն անցանքս ու լերկ,
ձեր մանուկներն անաուն ու մերկ,
մարդիկ վայրի ու լեռնային,
բակ ու խրճիթ մաշված ու հին.
փողոցները ցեխոտ ու կեռ,
բերքի տեղակ աղբակույտեր,
մարմնի տեղակ փայտե թիակ
ու բոլորը շնչող գիակ.
ամբած կանայք գետնատարած,
հույզ ու յեռանդ վաղուց սառած,
ամեն լեզու մեկ-մեկ թութակ,
խելքը թաղված խոր փոշու տակ.
ձեր ջաղացներն ու կախ անբան,
փուշով փակված հանդի ճամբան.
աշխարհը մի դատարկ ուղի,
կյանքը քնած ձեր վողջ գյուղի.
գերանդիններ պատած ժանգով,
սովի մատնած մանուկ ու կով,

ձգած գետին փոցիս ու մանգաղ,
 ձեր արոտներն, արտերն անքաղ,
 լցրած գանգը ձեր անոթի
 հեքյաթներով վողջ սնոտի,
 թե կա հզոր մի դատավոր,
 վոր կը տա ձեզ լույս ու լավ որ.
 դուք, հողիներ՝ հույսից կապված
 և հույսերի լույսով խաբված,
 ձեր միտքն անվերջ թափառական,
 ողբից հյուսված ձեր ապագան.
 սև հարկի տակ բակ բոլորած,
 սին հավատով միշտ մոլորած,
 կյանք եք հայցում դուք անհայտից,
 գուժ աղերսում մի գույգ փայտից...

Հեյ, լսեցեք, հեյ, լսեցեք. —
 բորբոքված ե նոր լուսածեգ,
 հուրն ե գրկել վողջ աշխարհին,
 մեռնում են լուռ շարքերը հին:

Ս Պ Ա Ս ՈՒ Մ

Ու մեր գյուղն ուշացած հին մի սել
 տնքում ե քարքարոտ ճամբեքում.
 դեռ պաղ ե մեր արևն, անկիզել,
 մեր կյանքը, մեր կենցաղն անբեկում:
 Ու սելը փշրված, փոշոտված
 գնգում ե մի անհուշ մշուշում,
 վնգում ե փշերից հոշոտված, —
 հին սելին այրում ե մի սպասում:

Ու գիտենք, վոր կը գա մի հրդեհ,
 հարաշարժ յերկաթե մի մաշին՝
 բատրակին դեպի կյանք կը դրդե,
 կը հասնի գյուղերի որհասին:
 Ու գիտենք, վոր ճամբին այս անձուկ
 շատ սելեր դեռ արգելք կունենան.
 Բայց մշուշն անուժ ե, շուտանցուկ, —
 ու գիտենք՝ հեռու չե կոմունան:

Յ Ե Ր Ե Կ Վ Ա Գ Յ ՈՒ Ղ ՈՒ Մ

Յերեկվա գյուղն անհույս խավար՝
կորցրել է բյուր թափ ու շնորհք,
կենդանի միտքն արել ավար,
տեղը սուղել մի սին ցնորք:

Գյուղում յերեկ ինչքան հանճար
անհովանի կորել են լուռ,
ինչքան, ինչքան վորբեր անճար՝
աշխարհի փակ աչքից անլուր:

Քանի-քանի անհայտ Քուչակ,
ստեղծագործող հուրը հողում,
անոթեան ընկած քուչա՝
ապրել են կյանք մի մորմորուն:

Ու քանի գեռ, ջրվեժ քանի,
քանի միլիոն կանալի ջուր,
քանի ափներ շրջող քամի
դարեր, դարեր անցել են զուր:

Յերեկվա գյուղն անհույս խավար՝
կորցրել է բյուր թափ ու շնորհք,
կենդանի միտքն արել ավար,
տեղը սուղել մի սին ցնորք:

Ճ Ա Մ Բ Ա Մ Ե Ձ

Ու գնգում են թեպեա
Արփա-չայից, Գափառ-գետից կտուղյա,
Սեանից մինչ Դերեգ՝
զարթնած դաշտեր և ջրվեժներ անփույթ,
ու բացվում են կապից
դյուղերը գորշ, հյուղերը հին, հոշոտ,
տապակվում են տապից
մուժում մաշված հազար ճամբա փոշոտ,
ու կիզվում են, թնդում,
դեգերում են աշխարհ մի նոր,
մի կյանք պայծառ, խնդուն, —
բայց ամեն ոք լուսանում է հին ուր...
Որն է բացվում կրկին,
հին ուր վորբ ու կիսաշող, անդադ,
նորից յերկրի գրկին
քաջքշվում է գուլթանը խուլ, դանդաղ:
Դեռ շատ գոմեշ ու կով
անքանքում են, տքնում ապրուստ մի ցուրա
ու փոշոտված շուքով
բորբոքում են մեռած մի գործ ի գուր:
Կարիքը ծով հսկա,
տրակատորը մեկ՝ ինչ է հազար շնչին,
հողը ծարավ կը գգա,

կը հերկվի դեռ յեզան լուծով չնչին:
 Ընկած հատ ու հատված,
 դեռ հզատակ ամենն իր խակ յեսին,
 իրար կյանքից գատված,
 համայնացման դեռ մեծ ճամբի կեսին:
 Թեպետ կա մի կռիվ,
 հղորների դավերի դեմ՝ լավեր,
 բայց մեր գյուղը ցրիվ,
 շատ և աղքատ, գանգատավոր, ավեր...
 Ու Սևանից Դեբեդ՝
 չեն շառաչում գյուղերն այնպես թափով,
 ու գնգում են թեպետ,
 բայց գնում են դեռ աշխարհի ավիով:

Դ Ե Պ Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն (?)

Ու քանի դեռ կը շղթայեն շեն ու շավիղ
 հազար կուլակ՝ դարան մտած դառան մորթում,
 դեռ խիճերում կը մրմնջա մի խուլ տավիղ,
 հին որերում որորելով ազամորդուն:
 քանի կանցնենք կյանքի ուղին մեր ծուլ սելով
 ու գետնավոր խուղից կելնի ծուխը դանդաղ,
 հողի մարդը կը դողդողա վողբ ասելով, —
 չեն մոտենա, չեն հագենա մուրճ ու մանգալ:

Մինչև չը գա հուժկու քաղաքն հրահոսան
 ու հրդեհի դիակնացած սիրտը գյուղի,
 չեն վերանա գութանաձար արտ ու խոզան,
 չի բացվի լույս՝ մինչև չը գա յերկաթուղի:
 Ու մեր կանչից յերբ շիկանա կյանքը կիզվող,
 յերբ պայքարում արեկոծվեն տերն ու ծառան,
 հուր աշխարհից թեկուզ հասնի մեզ մի թիզ հող, —
 մենք հաղթական կուղղվենք դեպի նոր գործարան:

Վ Ե Ր Զ Ի Ն Կ Ա Ն Չ

Հէյ, լսեցեք!!!
 Դուք՝ հրձիգներ հեռու, մոտիկ՝
 մեր աղեկեզ կանչը լսեք.
 դուք, վոր կապել հրե գոտիկ
 քաղաքներին շքեզ ու սեզ,
 հնչում եք հիմն ազատութեան,
 արդարութեան մի մարտակոչ,
 ձեր յերգերում մաճ ու գութան,
 ձեր թերթերում միլիոն ահոս,
 միլիոն, միլիոն խօսք ու ճառեր,
 միլիոն խոստում բարոակներին,—
 ու ձեր հայացքն անվերջ հասել
 շքեզ ու մեծ քաղաքներին...
 Հէյ, լսեցեք!—

Մեր կյանքն անկյանք մի անապատ,
 ծափից, չափից գրկված ու խեղձ,
 յերկիրը մի ափ միզապատ,
 գյուղն անկենդան դի ծխահեղձ.
 Ել վոչ մի տեղ բուրմունք լոշի,
 սովն է գրկել մեր հին ցեղին,
 նստել է խոր մի գորշ փոշի,
 ամենուրեք գեղին, գեղին:
 Մահ են շնչում անփառունակ
 տափակ խուղերն անդուռ ու ցած,

Ել ապրելու անընդունակ՝
 ժամ են շարժվում վողջ կուրացած:
 Հէյ, լսեցեք
 կանչը մեր զիլ, հեռածավալ,
 վոր դարերով միշտ կարկամել,
 պարտված ընկել մոխարթավալ,
 թող զրնգս մեկ անգամ ել.
 մեկ անգամ ել կանչենք, ճշանք
 ձեզ, վոր կիզել վողջ աշխարհին,
 լուծել հզոր մի հուր տենչանք՝
 դարձեք դեպի մեր գյուղը հին.
 մնում են ձեզ քար ու քորափ,
 կույս արտաներ՝ վորքան, վորքան.
 մեկ ել, վորպես մեռնող կարտալ,
 մենք կը ճշանք, վոր գաք, վոր գան,—
 հէյ, լսեցեք!!!...

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ—Ճ. Ս. Խ. Ճ.

Անձրեն յեկավ առատ, հորդուն,
 վողջույն տվեց հողի վորդուն,
 գետերն յելան գալար-գալար,
 ծարամն առան թուփ ու գալար:

Յերկրին իջավ գարուն նորից,
 հազար մանուկ ծնվեց մորից,
 հազար նոր կյանք, հազար նոր տուն,—
 անձրեն յեկավ առատ, հորդուն:

Հ Ի Մ Ք Ը Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ընկել ե հիմքը առաջին, —
 քաղաք ե դառնում գյուղը մեծ.
 ու տարված հեռվի շառաչին՝
 հին հյուղը ջրի տեղ հուր խմեց:
 Բորբոքվեց մի բոց անձանոթ
 մահացող յերկրի յերակում
 ու թնդաց մի ուումը, հրանոթ,
 վերացավ գյուղի վերարկուն:
 Յնցված ե հողը հողմաշատ,
 շաչում ե մի նոր մեքենա,
 ծփում ե ծափով ծովն արծաթ,—
 լաստի տեղ՝ հանկարծ շոգենավ:
 Սին ծեսեր ու հին դավանանք
 տվել են սուրող հուր-հովին,
 հոսում ե գյուղում լավա, հանք,—
 փոխվել ե կյանքը հիմնովին:
 Աթարի հարթը գարշ ու գորշ,
 արտերի հարդը բակերում
 դարձել են անդարձ ու մութ վորս,
 կամերն են անգործ դեգերում:
 Սերգասն իջել ե ասպարեզ,
 խնոցին ծեր ե, ծանրաշարժ,
 հազարը մեկով կը հարես,—
 խնոցին մի հին նորահարս:

Խրճիթում մեկտեղ հավաքված՝
 հայն անշառ ու թուրք գրացին՝
 կարգում են լուրեր ու հոգված,
 վառել են հուլդեր հրածին։
 Խիճերում փռված է լուսե դանձ,
 որերն են ճշում հյուրաբեր,
 շարժում է մարդկանց մի բորբ կանչ,
 բացվել են հրո բյուր ափեր։
 Տրակտորն է տակտով ակտիում,
 աշխատանքն այսոր խաղ է մի,
 գնչում է գութանն ու տնքում,
 վնգում է մի վոդը վաղեմի։
 Հանդերը հանգ են, չափ հիմի,
 շատ թանգ է ջանքը ոտնչպարի,
 ել այնտեղ տանջանք չի լինի,
 վոզ գյուղը կը գա շուրջպարի...
 Դեռ նոր է, գոռ է գործը մեր,
 դեռ կը գա ինչքան մեքենա՝
 ջնջելու դեռ շատ խոր ձրմեռ,
 վոր մեր գյուղն իսպառ հագենա։
 Նոր է, վոր հյուղը հուր խմեց
 ու նոր է ձուլվում շառաչին։
 քաղաք է դառնում գյուղը մեծ,—
 բնկել է հիմքը առաջին։

Զ Ա Ր Թ Ո Ն Ք

Յեղնում են ահա շարքերը մեկ-մեկ,
 թնդում է աշխույժ հանդերի ճամբան.
 փոշու ամպերից հյուսվել է մի մեզ,
 գյուղերում չը կա վոչ մի ձեռք անբան.
 չի պարկել անգործ վոչ մի արարած
 անցյալից յեկած խավար շորշոփում,
 դաշտերում փռված հատաղ, հորթարած՝
 այսոր ծփծփուն մի կյանք են կոփում։
 Տրվել է ասես հրե մի մտրակ
 ուշացած գյուղի ուշաթափ գանգին,
 հանկարծ արթնացած մշակ ու բաարակ՝
 նոր են հասկանում որերն այս անգին։
 Շուրհ է, խինգ է աշխարհին տիրել,
 ակների չափը քայլերդ մի խոսուն,
 հազար գույգ խոփեր ու հազար թիյեր
 յերկրի քնահար սիրան են ակոսում...
 Ավանն հինավուրց շաչում է, յեռում,
 գանգի գնգոցը մի կոծ կաղկանձոց,
 շոգու շաչյունը նետվել լեռներում,
 հողն է գալարվում մրցման նախանձով։
 Բացվել է այսոր աշխարհ մի անհայտ,
 անձանոթ մի ծով՝ անափ, արկածուն.
 մի լույս հորիզոն շարժուն, հրացայտ՝
 մեռնող գյուղերին կյանք է արծարծում։

Շեներն յերեկվա ել այն չեն կարծես.
 վողջին տիրել ե բոցոտ մի հուզում,
 աոնում են այսոր մի հանդես անծես,
 աշխարհի վազքին հասնել են ուզում:
 Զրեքը ծափ են, չափ են ու շաշյուն,
 պարում են սսես գրկում կանալի.
 հին հունը լքված, մի հանգած անճյուն,
 լույսի կայանը հույսի բանալի:
 Յենում են աշխույժ շարքերն ահա կուռ,
 շարժվում են, թնդում գյուղերն ալեկոծ,
 վողջ դառած այսոր մի կամք ահարկու՝
 աշխարհի չորս կողմ մղում են մի կոչ,
 դեռ չասված մի խոսք, մի ումբ ահագին,
 մի ուժգին բողոք, վոր պայթի, պայթի,
 վոր ճիչն այսորվա հասնի քաղաքին,
 ամոթից շիկնեն գույգերը մայթի:

ՆՈՐ - ԲԱՅԱԶԵՏ

Նոր-Բայազետը—
 են չարչի բազարի ավար
 յերեկվա Քյավառը խավար
 աշխարհի մոռացված շերտում
 այսոր նոր մի կյանք ե կերտում...

Դեռ յերեկ շարքերի անկոց
 կծկված եր նա միգում տրտում,
 վողջ սուզված մի տենդոտ ճահիճ,
 զանգերի զնգոցը սրտում.
 դեռ յերեկ քուրսու տակ շարված
 համայնքն եր արբեցած հույսով,
 լուրբին մի գաղանի հարված
 իշխում եր յերկնային ույժով. —
 յերազներ՝ գուրգուրիչ ու թով,
 զանգերում քառաթե մի փայտ,
 գալիս եր իրիկվա մութով
 ու փովում մի սոսկում անհայտ:
 Դուրսը դեռ զարգանդն եր տիրում,
 հավասն եր դռների փականք.
 վողջ կյանքը մի հեքյաթ սիրուն
 ու մարդիկ անարյուն, անկամք:
 Իջել եր անջինջ մի մշուշ
 պառաված մտքերին խոկուն
 ու թառել մի գունատ չիտուս
 ամենքի, ամենքի հոգուն:

Յեզ այսոր թնդում ե թափով
մամոտտած Քյավառի հոգին,
վողջունում ծիծաղով, ծափով
լուսատու առաջին տոկին.—
պայթում են քարափներն ույժով,
գետակը նոր հուն ե շահել,
պարում են ջրերը հույզով,—
Քյավառ մի հարս ե ջահել:
Ավանն ե հրդեհում վառված,
ամեն տեղ աստղեր են մաղել,
խավարին նետվել մի հարված,
չարքերն են այրերից փախել:
Բացվել են պատուհան, յերթիկ՝
արթնացող աշխարհի փուում,
շորշոփից աղաաված մարդիկ
լույսի տակ մայթերն են չափում:
Շռինդ կա որերում այս լույս,
զանգի տեղ հյոր մի շառաչ,
ժամերն են գեգերում անհույս,—
Բայագետն ընկել ե առաջ:

Աշխարհի մոռացված շերտում
այսոր նոր մի կյանք ե կերտում
են չարչի բաղարի ավար
յերեկվա Քյավառը խավար—
Նոր-Բայագետն:

Յ Ե Ր Գ Ը Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ու յերեսն իմ դարձրած հեռուն,
գեպի յերկիր մի տխտանի,
խիտ շարքերին հույզով յեռուն
յերգն եմ հզում Հայաստանի.—
Իմ անձանոթ ծանոթներին,
յեղբայրներիս գեռ մեզ անտես,
վոր մեր վողջի կամքն ուսերին՝
բորբոքում են հրե հանդես.
հայանի լինի թող աշխարհին
արշալույսվող կարկաչը մեր,
վոր թաղել ենք խավարը հին
ու մեր յետև մի խոր ձմեռ,
որորոցի թմրած մի յերգ
ու հավատի խուլ աղերսանք,
գյուղում նետել զարթոնքի ճեղք,
անհանգչելի մի հուր հոսանք...
Վարդի, գինու մեր հին յերկրում,
հայրենիքում կարմիր նըռան,
այսոր մի լույս կյանք ենք կռում,
հիմն ու քայլերգ մի թըրթըռան:
Յերեկ անկամք գեռ մի խըցիկ՝
կուլակներից մենք հոշտոված,
այսոր դարձած հուր ու հրձիգ՝

կիզվող գործի մի կուռ հատված,
 շարժում ենք ժիր գաշտերը շոգ,
 այգիներում շփոթ ու կանչ,
 աշխարհի գեմ պարզ յերեսով
 կանգնած ենք մենք, վորպես մեկ անձ:
 Բանձունքներում շիկնած արտեր,
 սայլեր, սայլեր հազարավոր,
 հազար կալում ու հազար տեղ
 աշխատանքի սերտ առավտո...
 Ու այս տոնին, համերգին այս
 թուշում եմ յես հեռու մի ծով,
 փափագելով մի անգին այց՝
 մեր միացող բախտի միջով...
 Ու յերեսն իմ դարձրած հեռուն,
 գեպի յերկիր մի տխտանի,
 խիտ շարքերին հույզով յեռուն՝
 յերդն եմ հղում Հայաստանի:

Յ Ե Ր Ե Կ Յ Ե Վ Ա Յ Ս Ո Ր

Սավար գիշեր. գյուղը սովի ճանկերում,
 ու պատերով կապույտ ցուրան եր սողոսկում.
 բոլորն անցած մի փառք եյին դեզերում,
 հնադարյան յեկեղեցում կար հսկում:
 Թոնրի շրթին մումուում եր ծեր կատուն՝
 յերագելով փթփթացող հարխսան.
 մոր փեշի տակ մերկ մանուկներ կարկատուն,
 լերկ պատերին աչքն եր իշխում բարի շան:
 Սաբեթն անկամք, ծեծկված ու կոր, կամազուրկ,
 տան մեծերի հոտած վոտքն եր արորում,
 ատամներում մի զուսպ արտունջ սրամաշուկ՝
 քարշ եր գալիս Սաբեթն անգույն որերում:
 Վողբում եյին հողմերը հին մարագում,
 կազմում եր կույր խավարն հանգես մի գազիր.
 լուսինը պաղ արնաթաթախ ճառագում
 ու փախչում եր հեռու ափեր լուսածիր:
 Սուլ շաչյունով որորոցը պուճախում
 գանգատվում եր ինչ-վոր մի յերգ մորմոքուն,
 փովում եր լուռ մեռած մի հույզ ջախջախուն,
 ու հուշերը վառվում եյին, բորբոքում:

Ու այս գիշեր գիշեր չը կա գյուղերում,
 ժամում հախկին հավաքվել ե մեծ ժողով.
 մանուկներն ել գրույց կազմել հյուղերում՝

անցյալի դեմ պատրաստում են մի բողոք:
 Կոմբլիճն և նստել հնի կոկորդին,
 շառագունել շփոթ շեներ, ազարակ,
 ու կուլակի ազիզ պահած մեկ փորդին
 գուրս և յեկել հոր հավատքին հակառակ...
 Դեռ աշխարհի հեռուներում չը գիտեն,
 փոր ծաղկել են գյուղի սրտում բյուր գանձեր,
 կոպիտ ույժի, անարգանքի, ծեծի դեմ
 ընկեր Սաբեթն արձակել և բանաձև:
 Մարագը հին դարձած խանութ բանկոպի,
 շարչու գլխին իջել և բուժ մի ապտակ,
 դարձի յեկած շրջմոլիկներն այն կոպիտ
 բորբոքում են մի լուսարձակ նպատակ:
 Ելեքարական ցայտերի դեմ լուսինն ի՞նչ,
 յերբ վարթնում և կյանքը, փորպես մի թիթեռ,
 յերբ ցնդում և հինն ու պարաված մանում նինջ,
 թնդում և հիմն որորոցի յերգի տեղ:

Տ Ո Ն

Շնչում են, հնչում են թափով
 հաղթական շեփորներ շաչուն, —
 այսոր կա մանկական թափոր,
 նոր կյանքն և գյուղերում աճում:
 Մաքրած և գյուղամեջն աղբից
 ու սրտում խրած հուր դանակ,
 անցնում և փողոցով անբիժ
 կենդանի մի մանուկ բանակ...
 Շարել են, վատել են ջահեր
 անկենդան մեյդանում ժանգոտ,
 ու փոխված մեյդանում ջահել
 հատած և այսոր մի բանկոպ:
 Կիզվում և հրեղեն կոչով
 յերեկվա բատրակը «հայվան»,
 վոռնում և անգոր մի բոցով
 կուլակի անատամ թայֆան:
 Շորշուփից արթնացող գյուղում
 ցնծում և անձանոթ հանդես, —
 հին ռանչպար Գասպարի հյուղում
 առաջին կնունքն և անձես:
 Ու փորպես գուրս ընկած շարքից,
 մի հիվանդ, հաշմանդամ գազան,
 ցնցված և որերի վարկից
 մահացող շոջերի մասսան:
 Գյուղական ծերերից կազմած՝

խնճույք կա հնավանդ ողուժ,
հաճույքի ճահիճում բազմած՝
զըրախտի դռներն են դոփում:
Ու տոթից խրտնած մի տերտեր
իր հոտի սերն է դեռ ուսել,
ունի նա իր յեան բերդեր,
դեռ լալկան ճոնչյունն ու սել:
Ու վորպես դյուլթված նոր որով՝
խմում են կենացը լույսի,
դեռ ունեն ապրելու կորով,
ցրտի դեմ մի մաշված քուրսի:
Դեռ հոգնած կա մի քեֆ այնտեղ,
ուր հին է ամեն ինչ ու խուլ,
վառվում է դեռ ձեթի կանթեղ,
ամենուր տխուր է, խարխուլ. —
գարշահոտ կարասի շարքեր,
սև պատեր, անարև անկյուն,
ամեն կողմ բորբոսնած բարքեր,
ամեն ինչ փոշեպատ, անգույն:
Մեկտեղ են որորոց, չորոց,
մարդու մոտ հավաբուն սարքած,
մանկան ճիչ, գոմեջի դռուց,
խավարում շարքերի արկած:
Ուշացած աշխարհի հերթից,
ժամացույցն՝ աքաղաղ կանչող,
ամեն որ վիժում է յերթից
մի կիսատ առավոտ անշող:
Յեվ խանձող նախանձով այսոր

վառել է թոնիր ու կանթեղ
մահացող ծերակույան անդոր, —
խնճույք է, հաճույք է այնտեղ:
Յեվ այստեղ, փողոցում արև,
ջնջված են շարքերը շեյթան,
ջոջերի ջահերն են մարել,
ջահեյներն իջել են մեյդան:
Որերը հըրաշեկ, հըրաշք՝
փոված են քայլերթի առաջ,
փոխված են գյուղերը գըրաստ,
ազատ են ու թուշուն դառած:
Այս կենցաղն անցավ է, անփուլթ,
կանաչ է, ճաճանչ է ճամբան.
ննջում է մշուշում կապույտ
հին կյանքը, վորպես մի դամբան:
Շնչում են, հնչում են թափով
հաղթական շեփորներ շաչուն.
այսոր կա մանկական թափոր. —
նոր կյանքն է գյուղերում աճում:


Վ Ա Ղ Ը

... Ու վաղը վառվող սրերը կը գան,
 կը շարժեն գյուղում միլիոն գույգ մկան,
 միլիոն փակ դռներ կը բացվեն հանկարծ,
 կը ճչան, կանչեն միլիոն սիրտ հանգած:
 կը գա հաղթական մի ցնցող տարի՝
 ջնջելու շորշովին ու ծուխն աթարի,
 զանգերի մեռնող մորմոքն յերերուն,
 սայլերի ճռինչն անանց լեռներում:
 կը պայթի չորս կողմ հզոր մի բեկում,
 արե-առավոտ միլիոն ճամբեքում,
 կը լռեն մեռնող սրերը բոլոր՝
 յերկրին հինավուրց կը բացվի նոր որ...
 Ու միլիոն հողի մի վոզի դառած
 ճիչ ու շառաչով կը շարժվեն առաջ,
 կը թռչեն դեպի մի շքեղ ուղի,
 դեպի արթնացող ապագան գյուղի:
 Նոր ճամբա ընկած ջրվեժներ վարար
 ույժ ու լույս կը տան բյուր մարդու անտուն.
 կը մղվի դաշտում մի կռիվ գորեղ՝
 իսպառ ջնջելու թե մուկ, թե մորեխ.
 կարկտի ամպերում կը բացվի հրթիռ,
 չորս կողմ կը տիրե ծիծաղ ու թրթիռ:

Արթնացած հագար կայան ու մատու,
 կը ջնջեն յերկրից աղոթք ու մատուռ.
 հողմի պես արագ կանցնի մի խարակ,
 փոշի կը դառնան խունկ ու սլափարագ...
 Անդարձ կը ջնջվի ահը չարքերի,
 փոչ վոք չի մնա շորշովի գերի. —
 ու վաղը վառվող սրերը կը գան,
 կը շարժեն գյուղում միլիոն գույգ մկան:

Վ Ա Ղ Ը Կ Ե Ր Գ Ե Մ

Վաղը կերգեմ իմ արթնացող գյուղից մինչև ծայրն աշխարհի,
 մինչև պողպատ Լոնդոնը մեծ, մինչև գյուղը շվեյցարական.
 վաղը կերգեմ յեղբայրական կիզվող կապը մեր վիթխարի,
 համաճարակն համայնացունց և ազգերի բոց ապագան:
 Ու կը կապեմ ախեղերքին, յեղերքներին հեռաձավալ՝
 Արագածոտն արուտագարդ, Արարատյան դաշտը կըրակ,
 Գեղարքունիքն արևաշատ, գետերը հորդ, ծաղկաթավալ
 և հոսանքը Շիրկանալի, վորպես հզոր մի զարկերակ:
 Ու կը կապեմ, ու կը կապեմ աշխարհի հետ իմ հայերին,
 յերբ ել հյուղում աստվածուբաց՝ չի տարածվի ծուխն աթարի,
 շիկամշուշ ու հրագես՝ կը շըշա հին Նայիրին,
 հողի ծարավն անհագ ու ծով և գյուղի ցամփն յերբ դադարի:
 Մեր աշխարհում փոթորկաշունչ՝ նոր և կապվում ճյուղը
 ճյուղին,
 թող ինձ գատեն ու չը կարգան խոկանքն իմ կուռ, թող
 ինձ հերքեն,
 թե չեն կանչում գյուղերը գուրկ, թե չի ննջում մեր
 խճուղին,—
 յես ազգերի բոց ապագան ու կապը մեծ վաղը կերգեմ:



Յ Ա Ն Կ

1. Պահարե	5
2. Հրածեշա	8
3. Իմ յերգը	9
4. Առաջին պոյեան իմ գյուղի	10
5. Անցողական	11
6. Կամուրջ	13
7. Մանդաղ ու մուրճ	18
8. Քաղաքը մեղչանական	20
9. Գյուղ և քաղաք	22
10. Դեպի գյուղ	24
11. Տեղափոխություն	26
12. Վոջույն	31
13. Գյուղ	33
14. Գյուղերը ծեր	35
15. Մարտակոչ	37
16. Սպասում	39
17. Յերեկվա գյուղում	40
18. Ճամբամեջ	41
19. Դեպի գործարան (?)	43
20. Վերջին կանչ	44
21. Գարնան անձրև	46
22. Հիմքը առաջին	47

23. Չարթոնք	49
24. Նոր-Ֆայագետ	51
25. Յերգը Հայաստանի	53
26. Յերեկ և այսօր	55
27. Տոն	57
28. Վազը	60
29. Վազը կերպեմ	62



«Ազգային գրադարան»



NL0358953

ԳԻՆՆ Ե 75 ԿՈՊ.



ՇԱԳԻԿՆ ՈՒ ԴԻՄԱՆԿԱՐԸ Հ. ԿԱՐԱԼՈՎԻ

4

49433